

Մարզամշակութային միջոցառում երիտասարդների մասնակցությամբ

28.02.2017

Փետրվարի 26-ին ՀՀԿ Գեղարքունիքի Երիտասարդական կազմակերպության խորհրդի նախաձեռնությամբ և Տարածքային Կազմակերպության խորհրդի աջակցությամբ Մարտունու ՀՀԿ երիտասարդների կողմից կազմակերպվեց և անցկացվեց մարզամշակութային միջոցառում: Միջոցառումը մեկնարկեց Մարտունու թիվ 3 միջնակարգ դպրոցի դահլիճում, որտեղ երիտասարդները ներկայացրին նժդեհյան գաղափարախոսությունը և հանդես եկան հայրենասիրական գեղարվեստական կատարումներով: Միաժամանակ անցկացվեց այլիկենդո կարատեի և ֆուտբոլի մրցումներ: Միջոցառմանը ներկա էին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, ՀՀԿ Գեղարքունիքի Երիտասարդական կազմակերպության խորհրդի նախագահ Կարեն Հակոբյանը, ԳՄ աշխատակազմի ԿՄՍ վարչության պետի տեղակալ Մաշա Բավեյանը, ովքեր ողջունեցին մարզիկներին և հաջող ընթացք մաղթեցին կազմակերպված մրցաշարին: Մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանն իր խոսքում նշեց, որ նմանօրինակ միջոցառումները ամրապնդում են երիտասարդների մեջ նժդեհյան հայրենասիրական գաղափարախոսությունը, մինևույն ժամանակ նպաստում առողջ ապրելակերպին ու սպորտային ձևերի մասսայականացմանը: Մրցաշարերի ավարտին հաղթողները պարգևատրվեցին մեդալներով, գավաթներով ու պատվոգրերով: